

**ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ  
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻ ԶԱՆԻ ՀԱՐՑԵՐ**

**Լ Ա. ԲԵԶՐԱՅԱՆ**

Հակամարտություն հասկացությունը՝ որպես մտածողության և գիտակցության անբակտելի մի մասնիկ, իր արտահայտումն է գտել մարդկային գործունեության ամենատարբեր բնագավառներում: Չնայած մեզանից յուրաքանչյուրը գիտակցում է, թե իրենից ինչ է ներկայացնում հակամարտությունը, այնուամենայնիվ սույն գաղափարի սահմանումը դրանով առավել հստակ և դյուրին չի դառնում:

Հակամարտություն հասկացությունը, ի սկզբանե լինելով սոցիալական հոգեբանության ուսումնասիրությունների նյութ, զարգացման պատմության ընթացքում ընդլայնել է կիրառման ոլորտները: Այսպես, ժամանակակից գիտության, տեխնիկայի և տեխնոլոգիայի, ինչպես նաև որոշ քաղաքական իրադարձությունների զարգացմանը զուգընթաց՝ այսօր արդիական է խոսել հակամարտության մասին նաև համակարգչային, քաղաքական, մարզական, մույնիսկ գործարարական ոլորտների շրջանակներում: Դրա հետ մեկտեղ՝ մեր առօրյա բառապաշարը հետզհետե հարստանում է այնպիսի բառերով ու արտահայտություններով, ինչպիսիք են ֆլեյմերը (կամ, այսպես կոչված, բռնկումները), Իսրայել-Պաղեստին, ԱՄՆ-Իրաք, դարաբաղյան հակամարտությունը և այլն:

Նշենք նաև, որ հակամարտության տարաբնույթ ուսումնասիրությունները, լինելով բավականին խնդրահարույց, գիտնականների շրջանում բազում վեճերի տեղիք են տվել:

Սույն հոդվածում, ներկայացնելով հակամարտության ուսումնասիրության պատմությունը, փորձ է արվում բացահայտելու հակամարտության էությունը, տիպաբանությունը և առաջացման պատճառները:

Անդրադառնալով բառի ստուգաբանությանն ու ընդհանուր սահմանմանը՝ նշենք, որ այն ծագել է լատիներեն *conflictus* - *ընդհարում* բառից և նշանակում է հակադիր հայացքների, շահերի, կարծիքների, տեսակետների բախում, տարաձայնություն, ինչպես նաև վիճաբանություն, որոնք կարող են հանգեցնել բարդությունների: Սակայն, ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ սահմանումը չի լուսաբանում մի շարք այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են՝ արդյոք հակամարտությունը միշտ կարող է դրսևորվել վեճի տեսքով, գոյություն ունի արդյոք, այսպես կոչված, միակողմանի հակամարտություն, այսինքն՝ երբ բացասական դիրքորոշում կա իրադրության մասնակիցներից միայն մեկի մոտ, կամ արդյոք բոլոր դեպքերում է հակամարտությունն ուղեկցվում կոնֆլիկտային վարքագծի դրսևորմամբ: Այս և նման այլ հարցերի լուսաբանմանն են անդրադարձել մի շարք գիտնականներ իրենց ուսումնասիրություններում: Այս առումով մասնագիտական գրականության մեջ հիմնականում իշխում է երկու իրարամերժ տեսակետ՝ առաջադրված հոգեբանների և սոցիոլոգների կողմից:

Հոգեբաններն առավել կարևորում են հակամարտության առաջացման հոգեբանական մեխանիզմները: Նրանց համոզմամբ՝ ցանկացած հակամարտության հիմքում ընկած են միջամճնային գատող (դիզյունկտիվ) հարաբերությունները: Օրինակ, Գ. Անդրեևայի կարծիքով, գատող հարաբերությունները ենթադրում են գրուցակիցների՝ առանձին գործելու, երբեմն նաև միմյանց հետ հակամարտելու ցանկության դրսևորում<sup>1</sup>: Մեկ այլ գիտնական՝ Ռ. Բեյլսը, խոսելով

<sup>1</sup> Տե՛ս Գ. Մ. Андреева, Социальная психология, М., 1980:

փոխազդեցության զանազան դրսևորումների մասին, առանձնացնում է բացասական զգացումների ոլորտը, որտեղ մա ընդգրկում է տարածայնությունը, ինչպես նաև հաղորդակցման մասնակիցների կողմից դրսևորվող լարվածությունն ու կոնֆլիկտային վարքագիծը<sup>2</sup>: Հոգեբաններ Բ. Լևինի և Փ. Բրիքմանի կարծիքով, հակամարտության առաջացման համար արդեն բավարար նախապայման է հակասող շահերի առկայությունը. այսինքն՝ ցանկացած հակամարտության շարժառիթ կարող է լինել խոսողների նպատակների, շահերի, մղումների և պահանջ-մունքների անհամատեղելիությունը<sup>3</sup>: Նման շարժառիթները հոգեբանության մեջ հայտնի են հակամարտության *դրդապատճառ* կամ *մոտիվ* անվանմամբ: Ըստ Ջ. Հոլմսի և Ս. Մրբեյի<sup>4</sup> հակամարտությունը միշտ չէ որ դրսևորվում է բացահայտ կոնֆլիկտային վարքագծով: Չէ՞ որ չեն բացառվում այն դեպքերը, երբ հակամարտության կողմերը կարող են անուղղակիորեն հակադրվել իրադրությանը՝ քողարկելով իրենց բացասական դիրքորոշումը հաղորդակցման գործընթացի որևէ տարրի նկատմամբ:

Ի տարբերություն հոգեբանների՝ սոցիոլոգները հակամարտության աղբյուրը փորձում են որոնել ոչ թե մարդու հոգեկանի, այլ նրա վարքագծի մեջ: Այսպես, Մ. Դոյչը պնդում է, որ հակադիր շահերի կամ նպատակների առկայությունը բավարար գործոն չէ հակամարտության ծագման համար, և որ այն կարող է առաջանալ միայն մասնակիցների շահերի և նպատակների բախման արդյունքում: Ելնելով այս դրույթից՝ Դոյչը հակամարտությունը բնորոշում է որպես հաղորդակցման մասնակիցների անհամատեղելի և հակադիր գործողությունների դրսևորում<sup>5</sup>:

Ընդհանրացնելով այս ամենը՝ փորձենք տալ հակամարտության ընդհանուր սահմանումը: Հակամարտությունը հաղորդակցման մասնակիցների հակադիր շահերը, մղումները և նպատակներն արտացոլող մի իրադրություն է, որտեղ հաղորդակցման գործընթացի մասնակիցների մի կողմի գործողությունները հակառակ կողմի ներկայացուցիչներն ընկալում են որպես մրցակցող շահերի բախում, որն էլ իր հերթին կարող է հանգեցնել ընդհարումային վարքագծի առաջացմանը. Նշենք նաև, որ լինելով հաղորդակիցների մերթն բախումների, հոգեբանական առանձնահատկությունների, ինչպես նաև նրանց ցանկությունների, նպատակների և կարծիքների անհամատեղելիության արգասիք՝ հակամարտությունը սոցիալ-հոգեբանական մակարդակից կարող է տեղափոխվել դեպի լեզվական մակարդակ և իր դրսևորումը գտնել խոսքում:

Անդրադառնալով հակամարտություն հասկացության ուսումնասիրության պատմությանը՝ նշենք, որ այն համեմատաբար նոր երևույթ է լեզվաբանության մեջ, և միայն քսաներորդ դարի վերջերից է սկսվել նրա ուսումնասիրությունը *լեզվաբանական հարթության* վրա: Հակամարտությունը ընդհանուր առմամբ սահմանելով որպես ցանկացած խոսքային և/կամ ոչ խոսքային հակասության արտացոլում՝ լեզվաբաններն սկսեցին ուսումնասիրել դրա կառուցվածքային, տիպաբանական, գործաբանական, հոգելեզվաբանական, հանրալեզվաբանական, ինչպես նաև էթնոլեզվաբանական առանձնահատկությունները: Հատկանշական

<sup>2</sup> Sh'u R. F. Bales, *Interaction process analysis: A method for the study of small groups*, Reading, MA: Addison Wesley, 1949:

<sup>3</sup> Sh'u P. Brickman, *Rule Structures and Conflict Relationships*, In P. Brickman (Ed.), *Social Conflict*, Lexington, MA: Heath, 1974, էջ 1-36: K. Lewin, *The Background of Conflict in Marriage*, In G. W. Lewin (Ed.), *Resolving Social Conflicts: Selected Papers on Group Dynamics*, New York, Harper, 1948, էջ 84 -103:

<sup>4</sup> Sh'u J. G. Holmes, S. L. Murray, *Conflict in Close Relationship*, In E. Tory Higgins, Arie W. Kruglanski (Ed.) *Social Psychology: Handbook of Basic Principles*, The Guilford Press, New York, London, 1996, էջ 622-654:

<sup>5</sup> Sh'u M. Deutsch, *The Resolution of Conflict: Constructive and Destructive Processes*, New Haven, CT: Yale University Press, 1973:

է նաև, որ լեզվաբանության մեջ բազմիցս առաջադրվել են իրարամերժ կարծիքներ ոչ միայն հակամարտության սահմանման, այլև տերմինի ճիշտ կիրառության վերաբերյալ: Հաղորդակցման մասնակիցների միջև առկա բացասական զգացմունքները բնութագրելու համար գիտնականների կողմից առաջարկվել են *վեճ*, *թշնամություն*, *հակասություն*, *մրցակցություն*, *ընդհարում*, *կոնֆլիկտ* և այլ տերմիններ: Այսպես, որոշ լեզվաբաններ<sup>6</sup> հակված են առանձնացնելու այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են հակամարտությունը և վեճը՝ գտնելով, որ առաջինն իր բնույթով մեղմացված հակասությունն է, իսկ երկրորդը՝ սուր կամ թշնամական: Նրանց համոզմամբ՝ այս երկու հասկացությունները միմյանցից տարբերակելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել, թե ինչպես են միմյանց հաջորդում հաղորդակցման մասնակիցների կողմից կիրառվող հակասություն արտացոլող քայլերը: Ինչպես տեսնում ենք, այս լեզվաբանները որպես ընդհանուր տերմին ընտրել են հակասությունը: Իսկ հանրալեզվաբաններ Չ. Գուդվինը և Մ. Գուդվինը իրենց տեսության ներկայացման և հիմնավորման համար ընդհանուր տերմին են ընտրել վեճը՝ սահմանելով այն որպես կործանիչ վարք (disruptive behaviour):

Ս. Ի. Պովարնինը միմյանց հակադրում է *հակամարտություն* և *վեճ* հասկացությունները<sup>7</sup>: Դիտարկելով վեճը տրամաբանական տեսանկյունից՝ Պովարնինը գտնում է, որ վեճը բաղկացած է իրար հաջորդող ապացույցներից, և ոչ յուրաքանչյուր հակամարտություն կարող է իր արտացոլումը գտնել վեճում: Ռուս լեզվաբան Ն. Վ. Մուրավյովան, դիտարկելով հակամարտությունը հոգեբանական տեսանկյունից, սահմանում է այն որպես հաղորդակցման հատուկ տիպ<sup>8</sup>: Ըստ այդմ, նա ներմուծում է *հաղորդակցման հակամարտություն* տերմինը՝ սահմանելով այն որպես հաղորդակցման առանձնահատուկ տիպի արդյունք, հաղորդակցական ակտի հատուկ վիճակ, ինչպես նաև՝ խոսքային վարքի յուրահատուկ դրսևորում:

Ռուս մեկ այլ լեզվաբան՝ Տ. Ի. Իվանովան, հակընդդեմ հաղորդակցման իր նկարագրության մեջ կանգ է առել *դիսոնանս* տերմինի վրա: Լեզվաբանը ցանկացած հակամարտության առաջացման դրդապատճառ է համարում գրուցակիցների միջանձնային հարաբերությունների հիմքում ընկած իմացաբանական աններդաշնակության կամ դիսոնանսի գործոնը<sup>9</sup>: Նշենք, որ իմացաբանական դիսոնանսի տեսությունն (cognitive dissonance theory) առաջին անգամ առաջադրվել է հոգեբան Լ. Ֆեսթինգերի կողմից, որն այն որակել է որպես մտավիճակ, որտեղ անհատը գիտակցում է իր արարքների անհամատեղելիությունը իր զգացմունքների կամ մտքերի հետ, կամ էլ արտահայտում է իր իսկ մտածելակերպին խորթ տեսակետներ<sup>10</sup>: Ինչպես տեսնում ենք, իմացաբանական դիսոնանսն ի սկզբանե առաջանում է անհատի ներքում վերջինիս մտքերի, տեսակետների և արարքների անհամատեղելիության հետևանքով, սակայն համապատասխան իրադարձությունների և հանգամանքների զարգացման դեպքում այն կարող է իր արտացոլումը գտնել նաև միջանձնային հարաբերություններում: Տ. Իվանովայի կարծիքով, սույն գործոնին նպաստում են գրուցակիցների բնավորության գծերը, անձնական հատկանիշները, ինչպես նաև՝ վերջիններիս գրաված դիրքը հասարակության մեջ:

<sup>6</sup> Տե՛ս, օրինակ, I. Hutchby, *Confrontation talk: Arguments, asymmetries, and power on talk radio*, Mahwah, NJ: Lawrence Erlbaum, 1996: S. O'Connell, *Managing Disagreement to Avoid Confrontation in Sports Talk Radio*, Applied Linguistics M. A. Essay, Teachers College, Columbia University, 2002:

<sup>7</sup> Տե՛ս Ch. Goodwin, M. H. Goodwin, *Interstitial argument*, In A. D. Grimshaw (Ed.), *Conflict talk: Sociolinguistic investigations in conversations*, Cambridge, UK: Cambridge University Press, 1990, էջ 85-117:

<sup>8</sup> Տե՛ս С. И. Поварнин, *Спор. О теории и практике спора*, Минск, 1992:

<sup>9</sup> Տե՛ս Н. В. Муравьева, *Язык конфликта*. <http://expertizy.narod.ru/books/lang/htm>:

<sup>10</sup> Տե՛ս Т. Н. Иванова, *Фактор когнитивного диссонанса и конфликтное речевое общение. "Речевое общение и аргументация"*, выпуск 2, Санкт-Петербург, 1996:

<sup>11</sup> Տե՛ս L. Festinger, *Cognitive Dissonance Theory*. [www.afirstlook.com](http://www.afirstlook.com):

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ մեր ուսումնասիրություններում մենք որպես ընդհանուր տերմին օգտագործել ենք *հակամարտություն* անվանումը, քանի որ, դատելով այդ բառի թե ընդհանուր սահմանումից, թե կիրառության առանձնահատկություններից, այն ունի առավել ընդհանուր իմաստ և իր մեջ կարող է ընդգրկել թշնամական վարքագծի գրեթե բոլոր դրսևորումները, ինչպիսիք են, օրինակ, վիճարանությունը, տարաձայնությունը, լեզվակոխը և այլն:

Լեզվաբանության շրջանակներում հակամարտության ուսումնասիրությունը կատարվել է մի քանի ուղղություններով, և տարբեր գիտնականներ այդ խնդիրը դիտարկել են տարբեր տեսանկյուններից: Այսպես, օրինակ, **էթնոլեզվաբանական** ուսումնասիրությունների համար հիմնական նյութ է ծառայել լեզվակիրների հակամարտությունը: Նշենք, որ *language conflict* արտահայտությունը թարգմանաբար հնչում է որպես լեզուների հակամարտություն, սակայն երկիմաստությունից և անորոշությունից խուսափելու նկատառումներով մենք այստեղ գործածում ենք *լեզվակիրների հակամարտություն* արտահայտությունը, քանզի, ինչպես վկայում են այս ուղղությամբ կատարված որոշ ուսումնասիրություններ<sup>12</sup>, տվյալ դեպքում խոսքը ոչ թե լեզուների միջև առաջացած հակամարտության, այլ բազմալեզու համայնքների տարբեր լեզվակիրների միջև ընթացող հակամարտության մասին է: Էթնոլեզվաբանների սահմանմամբ՝ լեզվակիրների հակամարտությունը հասարակական բնույթ ունի: Այն կարող է առաջանալ բազմալեզու համայնքներում միմյանց հակասող մշակութային արժեքների, մտածելակերպի, խմբային գիտակցության և այլ նորմաների անհամապատասխանելիության պարագայում և արդյունքում: Համապատասխանաբար, լեզվակիրների հակամարտությունը կարող է դրսևորվել միջլեզվական, խոսքային, ինչպես նաև ոչ խոսքային մակարդակներում: Միաժամանակ, գիտնականների դիտարկմամբ, լեզվակիրների հակամարտությունը հիմնականում սահմանափակվում է սպառնալիքների դրսևորմամբ և միայն առանձին դեպքերում կարող է հանգեցնել սուր հակամարտության, ինչպիսիք են ռազմական տարաձայնությունները:

Հակամարտությանը նվիրված **հանրալեզվաբանական** ուսումնասիրություններում նշանակալից տեղ են զբաղեցնում այն աշխատությունները, որտեղ գիտնականները հակամարտությունը և վերջինիս դրսևորումները դիտարկում են որոշակի միջավայրում, որոշակի սեռի, ռասայի, տարիքի պատկանող, ինչպես նաև որոշակի մասնագիտության տեր անձանց միջև: Թերևս, նմանօրինակ ուսումնասիրությունների սկիզբ կարելի է համարել 1972 թվականին հրատարակված Ու. Լաբովի *ավանդական վիրավորանքներն* արժարժող աշխատությունը<sup>13</sup>: Ավանդական են համարվում այն վիրավորանքները, որտեղ ծաղրով մատնանըշվում է տվյալ անձի բնածին կամ ձեռքբերովի հատկանիշներից որևէ մեկը, ինչպես օրինակ՝ մազերի գույնը, հասակը, որևէ մասնագիտության պատկանելը, որևէ երկրից կամ տեղանքից սերելու փաստը և այլն: Ընդ որում, յուրաքանչյուր հասարակություն և մշակույթ ունի իրեն հատուկ ավանդական վիրավորանքների համակարգ, որը շատ դեպքերում կարող է չընթրնվել օտարերկրացիների կողմից: Այսպես, օրինակ, Անգլիայում երեխաների և դեռահասների շրջապատում ընդունված է կարմրահեր անձանց անվանել *ginger* (շիկակարմիր): Իր աշխատության մեջ Լաբովը դիտարկում է, թե ինչպիսի ավանդական վիրավորանքների տեսքով է հակամարտությունը տեղ գտնում սևամորթ դեռահասների հաղորդակցման մեջ: Սևամորթ դեռահասների միջև ծավալվող հակընդդեմ հաղորդակցմանն է նվիրված նաև հանրալեզվաբաններ Չ. Գուդվինի և Մ. Գուդվինի հիշատակված

<sup>12</sup> Տե՛ս, օրինակ, **P. H. Nelde**, *Research on Language Conflict, Sociolinguistics, An International Handbook of the Science of Language and Society*, Walter de Gruyter, Berlin, New York, 1987: **E. Oksaar**, *Mehrsprachigkeit, Sprachkontakt, Sprachkonflikt*. In: *Sprachkontakt und Sprachkonflikt*. Nelde, P.H., ed., Wiesbaden, 1980:

<sup>13</sup> Տե՛ս **W. Labov**, *Rules for Ritual Insults*, In David Sudnow (ed.), *Studies in Social Interaction*, New York, Free Press, 1972:

աշխատությունը<sup>14</sup>, որտեղ հեղինակները, վերլուծելով աֆրոամերիկյան երեխաների միջև ընթացող փոդոցային հակամարտության մոտ 175 ձայնագրված մուշներ, բացահայտում են, որ համապատասխան բառերի, արտահայտությունների, ինչպես նաև հաղորդակցման ստրատեգիաների ընտրության դեպքում հաղորդակցման մասնակիցների միջև կարող է ծագել հակամարտություն: Հեղինակների դիտարկմամբ՝ հաղորդակցման մասնակիցների կողմից կիրառված այնպիսի հնարքներ, ինչպիսիք են տարածայնությունը և մերժումները, նույնպես կարող են հանգեցնել հակամարտության:

Դ. Էդերի բացահայտմամբ՝ իզական սեռին պատկանող դեռահասների միջև ընթացող հակամարտությունը հիմնականում դրսևորվում է ավանդական վիրավորանքների կիրառմամբ<sup>15</sup>: Միաժամանակ Էդերը նշում է, որ սևամորթ դեռահասների շրջանում ավանդական վիրավորանքների կիրառման հաճախականությունը առավել բարձր է, քան նրանց սպիտակամորթ հասակակիցների: Ինչ վերաբերում է այն փաստին, թե ինչպիսի մոտեցում են ցուցաբերում կանայք և տղամարդիկ հակամարտահարույց իրադրությանը, Էդերը եզրակացնում է, որ կանայք առավել հակված են հակամարտահարույց իրադրությունները վճռելու, քան տղամարդիկ, որոնք մնան դեպքերում կամ նահանջում են, կամ խնդիրը թողնում չլուծված:

Ակնհայտ է, որ հակամարտության թե դրսևորումները, թե դրդապատճառները մի մշակույթից մյուս մշակույթ տարբերվում են: Այսպես, օրինակ, արևմտյան մշակույթը ներկայացնող շատ երկրներում ընդունված է հակաճառել զրուցակցին, չհամաձայնել նրա հետ, մինչդեռ արևելյան մշակույթ կողմ երկրներում ամենամեղձ տարածայնությունն անգամ շատ դեպքերում կարող է ընկալվել որպես անհնազանդություն կամ զրուցակցին վիրավորանք հասցնելու միտում: Այս առումով նշենք, որ մի շարք հեղինակներ<sup>16</sup> փորձել են ուսումնասիրել հակամարտահարույց ստրատեգիաները համապատասխան մշակույթային համատեքստերում, ինչպես նաև տալ այդ ստրատեգիաների դասակարգումը:

Միևնույն ժամանակ կատարվել են նաև հակամարտության զուտ լեզվական ասպեկտն ընդգրկող հետազոտություններ: Նմանատիպ աշխատանքներից կարելի է առանձնացնել այնպիսիները, որոնք ուսումնասիրում են հակամարտության որևէ կոնկրետ դրսևորում մեկ լեզվի շրջանակներում (այսպես օրինակ, լեզվաբան Մ. Դորիլն իր աշխատության մեջ ուսումնասիրում է տարածայնության դրսևորումը ճապոներենում<sup>17</sup>), կամ որտեղ հակամարտությունը ուսումնասիրվում է որևէ կոնկրետ միջավայրում կամ համատեքստում (օրինակ՝ լսարանում<sup>18</sup>, ուսումնական հաստատություններում<sup>19</sup>, դատավարության ընթացքում<sup>20</sup>, ռադիո

<sup>14</sup> St' u Ch. Goodwin, M. H. Goodwin, նշվ. աշխ., էջ 85-117:

<sup>15</sup> St' u D. Eder, Serious and Playful Disputes: Variation in Conflict Talk among Female Adolescents, "Conflict Talk: Sociolinguistic Investigations in Conversations". Cambridge, UK: Cambridge University Press, 1990:

<sup>16</sup> St' u Ch. Kakava, Discourse and Conflict, In: The Handbook of Discourse Analysis, Blackwell Publishing, 2003:

<sup>17</sup> St' u M. A. Dorill, Disagreement in Japanese: Three Case Studies (Conversation, Argumentation, Cross Cultural Communication), In: Volume 5806A of Dissertations Abstracts International, University of South Carolina, 1997, էջ 2181:

<sup>18</sup> St' u D. W. Johnson, R. T. Johnson, Teaching students to be peacemakers. Edina, MN: Interaction Book Company, 1995. - D. W. Johnson, R. T. Johnson, Creative controversy: Intellectual challenge in the classroom. Edina, MN: Interaction Book Company, 1995:

<sup>19</sup> St' u J. Rees-Miller, Linguistic Features of Disagreement in Face-to-face Encounters in University Settings, 1995:

<sup>20</sup> St' u Ch. Briggs, Disorderly Discourse: Narrative, Conflict & Inequality. Oxford: Oxford University press, 1996:

շումների ժամանակ<sup>21</sup>, կինոֆիլմերում<sup>22</sup> և այլն): Այսպիսի ուսումնասիրություններ կատարող հեղինակների ուշադրության կենտրոնում հիմնականում եղել է այն փաստը, թե ինչպիսի դրսևորումներ կարող է ունենալ հակամարտությունը խոսքում, և որոնք են լեզվական այն միջոցները, որոնք հակամարտող կողմերը հակված են գործածելու խոսքում: Այս նպատակով էլ վերոհիշյալ ուսումնասիրություններում հեղինակները մեծ տեղ են հատկացրել հաղորդակցման մասնակիցների կողմից կիրառված որոշ բառային և հնչերանգային յուրահատկություններին և արդյունքում առաջադրել այն դրույթը, որ խոսքային որոշ առանձնահատկություններ, ինչպիսիք են վարանում, տատանում արտահայտող նշույթների, ինչպես նաև կարճատև դադարների կիրառումը խոսքում, կարող են որոշ չափով մեղմացնել տարածայնությունը և վերջինիս ընկալումը գրուցակցի կողմից, մինչդեռ անհամաձայնություն արտահայտող բառերի ուղղակի կիրառումը և շեշտված կառուցվածքների գործածությունը, ընդհակառակը, կարող են սաստկացնել այն:

Հայ լեզվաբաններից խոսքի մեջ հակամարտության դրսևորման ուսումնասիրության հարցին անդրադարձել է Շ. Պարոնյանը: Հաշվի առնելով սոցիալ-հոգեբանական գործոնների դերը խոսքային գործունեության ընթացքում՝ հեղինակն առաջարկում է երկխոսական միավորները դասակարգել ըստ հաղորդակցման նպատակի կամ բնույթի՝ *հակընդդեմ* և *ներդաշնակ* երկխոսական միավորներ: Հակընդդեմ հաղորդակցման դրսևորումներից մեկն էլ հեղինակը համարում է վեճը կամ լեզվակռիվը, որը նա սահմանում է որպես «հաղորդակցման մասնակիցների իրարամերժ ռեպլիկների փոխանակում»<sup>23</sup>: Հեղինակի համոզմամբ, հաղորդակցման մասնակիցների կողմից առաջադրված տարբեր, երբեմն միմյանց հակասող գնահատականների բախումը կարող է հանգեցնել հակընդդեմ հաղորդակցման ձևավորմանը:

Հայտնի է, հաղորդակցման գործընթացում մեծ դեր է խաղում այն փաստը, թե ինչպես են մասնակիցները գնահատում այս կամ այն երևույթը, իրադրությունը և գրուցակցին: Համապատասխանաբար հաղորդակցման գործընթացին բնորոշ համագործակցության սկզբունքները խախտվում են, երբ տեղի է ունենում երկու միմյանց հակասող գնահատականների ընդհարում, այսինքն՝ խոսողի գնահատականը չի համապատասխանում գրուցակցի գնահատականին: Նմանատիպ հակամարտության պատճառ կարող է հանդիսանալ նաև հաղորդակցման մասնակիցների միջև ծագած տարածայնությունը գնահատականների ստորակարգության (հիերարխիայի) վերաբերյալ: Նման դեպքերում հակամարտող կողմերից յուրաքանչյուրի համար կարևոր է, որ առաջնային համարվի հենց իր գնահատականը:

Ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման հետ մեկտեղ հակամարտության ուսումնասիրությունն արդիական դարձավ նաև այսպես կոչված թվացյալ իրականության (virtual reality) պայմաններում: Այսպես, ժամանակակից լեզվաբանության մեջ ընդունված է առանձնացնել դիսկուրսի հատուկ մի տեսակ՝ էլեկտրոնային դիսկուրսը (e-discourse), որի հիմնական նպատակն է կատարել ինտերնետում ծավալվող գրույցների, էլեկտրոնային հաղորդագրությունների և ուղերձների խոսքային վերլուծություն: Ինչպես առօրյա հաղորդակցման մեջ, այդպես էլ թվացյալ իրականության պայմաններում հավաքեալ չեն հակամարտության դրսևորումները: Վերջիններիս ընդունված է տալ *ֆլեյմ* անվանումը (անգլերեն՝ *flame* - բռնկում բառից): Ֆլեյմերն իրենցից ներկայացնում են էլեկտրոնային փոստի կամ ինտերնետում ծավալվող գրույցի ընթացքում փոխանցվող ագրեսիվ բնույթ ունեցող և զայրույթ արտահայտող հաղորդագրություններ:

<sup>21</sup> Stu, օրինակ, I. Hutchby, նշվ. աշխ.: S. O'Connell, նշվ. աշխ.:

<sup>22</sup> St'u R. Piazza, Conflict Discourse in Italian Film Scripts. Internet resources: [www.public.iastate.edu/~goodwin/conf/piazza.pdf](http://www.public.iastate.edu/~goodwin/conf/piazza.pdf):

<sup>23</sup> St'u Ս. А. Паронян, Диалогические единицы целенаправленного общения на примере диалога-ссоры, "Вестник Ереванского университета", 1991, № 3:

Հատկանշական է նաև, որ թվացյալ իրականության պայմաններում հակամարտող կողմերը, զրկված լինելով իրենց խոսքին համապատասխան հնչերանգային առանձնահատկություններ հաղորդելու հնարավորությունից, հակամարտում են բացասական զգացմունքներ արտահայտող պայմանական նշանների (emoticons), ինչպես նաև ինտերնետային լեզվին բնորոշ, բացասական իմաստ մատնանշող համառոտագրությունների կիրառմամբ: Այսպես, օրինակ, հետևյալ երեք նշանները :-P, :-y, :-o հուշում են այն մասին, որ գրուցակիցը զայրացած է և գոռալով է հաղորդակցվում, իսկ YBS (You'll be sorry) համառոտագրությունը սպառնալիք է մատնանշում: Ինչպես ցույց են տալիս մեր հետազոտությունները, էլեկտրոնային դիսկուրսում բացասական դիրքորոշում կամ թշնամական տրամադրվածություն արտահայտող նման պայմանական նշանների քանակը երեսունից ավելի է, իսկ համառոտագրությունների թիվը հասնում է մոտ քսանի: Ինտերնետային գրույցների ընթացքում տեղ գտած հակամարտություններն ունեն մեկ այլ առանձնահատկություն ևս. դրանք կարող են ծավալվել միանգամից մի քանի մասնակիցների միջև: Ըվեյցարիացի գիտնական Մ. Լուզինբյուլը, անդրադառնալով էլեկտրոնային ցանցում տեղ գտած հակամարտության զանազան դրսևորումներին, նշում է, որ ինտերնետային գրույցի ընթացքում հաղորդակցման մասնակիցների միջև կարող է առաջանալ հակամարտություն, եթե նրանք խախտեն ցանցային էտիկետի կանոնները: Հեղինակի բացահայտմամբ, ցանցում հակամարտությունը հիմնականում դրսևորվում է ուղղակիորեն արտահայտված վիրավորանքների և հարձակումների կիրառմամբ<sup>24</sup>: Սույն հանգամանքը, թերևս, կարելի է բացատրել նաև թվացյալ իրականության պայմաններում ծավալվող հաղորդակցման անանուն (anonymous) բնույթով, այսինքն՝ հաղորդակցման մասնակիցները, զրկված լինելով միմյանց տեսնելու, ճանաչելու հնարավորությունից, առավել «ազատ» են գործում հակամարտելիս:

Եզրափակելով մեր խոսքը՝ նշենք, որ արդյունավետ և անխափան հաղորդակցման ապահովումը կարող է լինել հաջողության գրավականը առօրյա կյանքի ցանկացած բնագավառում: Լինի դա գործնական հանդիպում, մտերմիկ գրույց, թե տեսակետների ու հայացքների տարբերությունից ծագած բանավեճ, հաղորդակցման մասնակիցներն ընդհանուր առմամբ փորձում են նպաստել հաղորդակցման գործընթացի բնականոն և ներդաշնակ զարգացմանը: Նման դեպքերում հաղորդակցման մասնակիցների կողմից դրսևորվում է համագործակցություն, որն ինքնին ենթադրում է այնպիսի իրադրություններ, երբ հաղորդակցման մասնակիցները, ելնելով իրենց ունեցած տեսակետների, կարծիքների, ցանկությունների, ինչպես նաև նպատակների ընդհանրությունից, պաշտպանում են միմյանց շահերը և փորձում են համատեղ գործունեության միջոցով հասնել միևնույն նպատակին: Սակայն, ինչպես տեսնում ենք, հաղորդակցման գործընթացը չի բացառում նաև այնպիսի անցանկալի իրադրություններ, երբ գրուցակիցների հաղորդակցական նպատակները բախվում են, և համագործակցությունը նրանց միջև դառնում է անհնար: Սույն գործոնն իր հերթին կարող է հանգեցնել հակամարտության առաջացմանը հաղորդակցման գործընթացում:

**Л. А. БЕКАРЯН - Некоторые вопросы формирования и развития понятия "конфликт".** - Понятие "конфликт" в последнее время расширило свой круг использования, став применимым в различных общественных сферах: в политике, спорте, деловом и электронном общении и т. д.

В данной статье, на основе психо-, прагма- и социолингвистических подходов, делается попытка выявить суть конфликта, его типологию, а также вероятные причины его побуждения и возникновения.

<sup>24</sup> Sb'u M. Luginbühl, Streiten im Chat. Linguistik online. 15/3/2003: